ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 10/2025/Վ/Վ

ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 22 սեպտեմբերի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի նկատմամբ 2025 թվականի հունիսի 24-ին վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված՝ թիվ 10/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

1. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով «168.am» լրատվական կայքի՝ 2024 թվականի հուլիսի 15-ի՝ «Փոխքաղաքապետը մի ճլոտի է տվել քաղաքացուն իր վարքի համար. Թալինի քաղաքապետ» վերտառությամբ

հրապարակումը[1] (այսուհետ՝ Հրապարակում) և Հանձնաժողովի կողմից հարուցված՝ թիվ 14/2024/Վ/Վ վարույթի նյութերը, 2025 թվականի հունիսի 24-ին կայացրել է Տավրոս Սափեյանի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 10/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ՝ Հարուցման որոշում):

1.2. Հրապապակմամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը «24News» լրատվամիջոցի հետ զրուցում նշել է, որ տեղյակ է իր տեղակալ Գուրգեն Թադևոսյանի կողմից քաղաքացու նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու դեպքի մասին և ըստ իրեն հասած տեղեկությունների՝ «փոխքաղաքապետ Գուրգեն Թադևոսյանն ընդամենը մեկ ճլոտի է տվել քաղաքացուն իր դրսևորած վարքի համար»:

1.3. Գուրգեն Թադևոսյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ թիվ 14/2024/Վ/Վ վարույթի իրականացման ընթացքում Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 1-ի թիվ 01/1274-2025 գրությամբ Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանին հրավիրել է վարույթի շրջանակներում կայանալիք լսումներին՝ որպես վկա ցուցմունք տալու նպատակով՝ տեղեկացնելով, որ ցուցմունքը կարող է ներկայացվել նաև գրավոր: 2025 թվականի ապրիլի 2-ին Հանձնաժողովում մուտքագրվել է Տավրոս Սափեյանի գրավոր ցուցմունքը, որով վերջինս հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ինչ վերաբերվում է «Փոխքաղաքապետը մի ճլոտի է տվել քաղաքացուն իր վարքի համար. Թալինի քաղաքապետ» վերտառությամբ «168.am» լրատվական կայքի հրապարակած տեղեկատվությանը, նշեմ հետևյալը, որ այդ ընթացքում ես դեռևս չէի հասցրել դեպքի մանրամասների մասին զրուցել Գուրգեն Թադևոսյանի և այլ ներկաների հետ, տարբեր աղբյուրներից տարաբնույթ խոսակցություններ էին հասնում ինձ միջադեպի հետ կապված, որոնք հստակ չէին և ես այնպես էի հասկացել, որ Գագիկ Մնացականյանի ոչ ադեկվատ և լկտի պահվածքի համար Գ.Թադևոսյանը մի ապտակ է տվել նրան և երբ վերը նշված լրատվամիջոցից ինձ հետ կապ հաստատեցին, դեռևս միջադեպի մանրամասներից տեղյակ չէի: Հետագայում, երբ Գուրգեն Թադևոսյանը և

[1] Հասանելի՝ https://168.am/2024/07/15/2073048.html

ներկաները առարկայական ինձ ներկայացրեցին դեպքի մանրամասները, իմացա, որ իրականում (Գագիկ Մնացականյանին) նշված միջադեպի ընթացքում որևէ մեկը չի հարվածել:»:

1.4. Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 25-ի թիվ 01/2577-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Տավրոս Սափեյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված գրությունը Տավրոս Սափեյանը ստացել է 2025 թվականի հունիսի 28-ին (հիմք՝ AL0128468973AM փոստային անդորրագիր):

1.5. 2025 թվականի հուլիսի 1-ին Հանձնաժողովում մուտքագրվել է Տավրոս Սափեյանի գրավոր պարզաբանումը:

1.6. 2025 թվականի հուլիսի 2-ին Հանձնաժողովը թիվ 01/2640-2025 գրությամբ «24NEWS» զանգվածային լրատվության միջոցի լրագրող Մերի Մանուկյանից պահանջել է ներկայացնել վարույթի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որը ներկայացվել է Մ.Մանուկյանի՝ 2025 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի հուլիսի 1-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ վարույթի շրջանակներում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Տավրոս Սափեյանը պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) է ներկայացրել առ այն, որ.

«24NEWS» լրատվամիջոցի հետ զրույցում հայտնել է, որ տեղեկացված է իր տեղակալ Գուրգեն Թադևոսյանի կողմից քաղաքացուն ապտակելու վերաբերյալ և կատարել է «Գ.Թադևոսյանը քաղաքացուն ոչ ադեկվատ վարքագծի հետ կապված ընդամենը մեկ ճլոտի է տվել» արտահայտությունը, որով չի փորձել արդարացնել Թալին համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Թադևոսյանի վարքագիծը կամ խրախուսել

նրա թույլ տված հակաօրինական որևէ գործողություն, այլ պարզապես լրագրողի հարցին առօրյա-խոսակցականով է պատասխանել, որ «մեկ ճլոտի է տվել», այսինքն՝ ապտակել է, քանի որ, ինչպես նշել է իր գրավոր բացատրությունում, այդ ընթացքում իրեն հասած տեղեկություններով նշված քաղաքացին Արագածավան բնակավայրում հանրապետության ղեկավարության մասնակցությամբ իրականացվելիք միջոցառումներին նախապատրաստվելիս անթույլատրելի լկտի պահված է ցուցաբերել, որի համար Գ.Թադևոսյանը նրան ապտակել է, սակայն հետագայում նախաքննությամբ պարզվեց, որ իրականությանը չէր համապատասխանում:

Պարզաբանման համաձայն՝ Տ.Սափեյանը չի կարծում, որ իր կատարած արտահայտությունը կարող է մեկնաբանվել որպես անօրինական գործողության արդարացման կամ խրախուսման փորձ, քանի որ ընդամենը հայտնել է իրեն այդ պահին հայտնի տեղեկություն:

Պարզաբանման համաձայն՝ Տ.Սափեյանը խիստ քննադատության է արժանացնում համայնքապետարանի ցանկացած աշխատակցի, անկախ զբաղեցրած պաշտոնից, դրսևորած վարքագծի կանոնի խախտման յուրաքանչյուր դեպք, դրանց նկատմամբ անհանդուրժող է, հատկապես Թալին համայնքի բնակչի նկատմամբ համայնքային ծառայողի դրսևորած ամենատարրական անհարգալից վերաբերմունքն անհետևանք չի կարող մնալ:

Պարզաբանմամբ նշվել է, որ Տ.Սափեյանը հավաստիացնում և պնդում է, որ իր տեղակալին արդարացնելու, նրա կատարածի նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերելու նպատակ չի ունեցել: Գ.Թադևոսյանի կողմից քաղաքացու նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու կապակցությամբ քննչական մարմնում հարուցվել է վարույթ, իրականացվել է քննություն, որին Տ.Սափեյանը երբևէ չի միջամտել, ընթացքով չի հետաքրքրվել, կողմնակից է եղել արդարացի քննությանը և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն:

3. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1. ՀՀ վարչապետի՝ 2021 թվականի օգոստոսի 17-ի թիվ 865-Ա որոշմամբ Տավրոս Սափեյանը նշանակվել է Թալին համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ

2022 թվականի հոկտեմբերի 17-ից ստանձնել է Թալին համայնքի ղեկավարի պաշտոնը և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2. Հանձնաժողովում 2025 թվականի ապրիլի 28-ին մուտքագրված գրությամբ «24NEWS» զանգվածային լրատվության միջոցի լրագրող Մերի Մանուկյանը հայտնել է հետևյալը.

3.2.1. Հարցազրույցի ընթացքում Տավրոս Սափեյանի հնչեցրած խոսքերը զանգվածային լրատվության միջոցի հրապարակմամբ վերաշարադրվել են նույնությամբ՝ առանց որևէ փոփոխության:

3.2.2. «24News.am» լրատվական կայքում հարցազրույցի վերաբերյալ հրապարակման հղումը հնարավոր չէ տրամադրել, քանի որ նշված կայքը գտնվում է վերազնիման փուլում, և նյութերի մի մասը դեռևս արխիվացված է:

4. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.2. Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի,

դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

4.3. Վարքագծի կանոնագրքի 14-րդ կետի համաձայն.

«14. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեություն (գործողություն կամ անգործություն) կամ դրա խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ:»:

4.4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)

6. (...)

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:»:

5. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումները

Նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տ.Սափեյանի հնչեցրած խոսքի իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության,

հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[2]

Եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ չնայած արտահայտման ազատությունը կարևոր է բոլորի համար, այն հատկապես կարևոր է ընտրովի պաշտոններ զբաղեցնող անձանց համար: Վերջիններս ներկայացնում են իրենց ընտրազանգվածին, ուշադրություն են գրավում նրանց մտահոգությունների նկատմամբ և պաշտպանում են նրանց շահերը: Համապատասխանաբար, այս անձանց արտահայտվելու ազատության նկատմամբ միջամտությունների իրավաչափությունը ենթակա է Եվրոպական դատարանի կողմից խստագույն քննության: Եվրոպական դատարանը նման շեշտադրում է կատարել ինչպես խորհրդարանների պատգամավորների,[3] այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքային խորհուրդներ) անդամների[4] և քաղաքապետերի[5] խոսքի նկատմամբ միջամտության իրավաչափությունը գնահատելիս:

Միաժամանակ, Հանձնաժողովն ընդգծում է, որ մի շարք գործերի շրջանակներում՝ ինչպես վիրավորանքին կամ զրպարտությանը[6], այնպես էլ բռնություն հրահրելուն կամ արդարացնելուն[7] առնչվող դեպքերում Եվրոպական դատարանն

---

[2] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[3] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria) գործով 2001 թվականի փետրվարի 27-ի վճիռը, դիմում no. 26958/95, § 36

[4] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 53

[5] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 32

[6] Տես Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesic v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռ, դիմում no. 19362/18, § 104

[7] Տես Զանան ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Zana v. Turkey [GC]) գործով 1997 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, դիմում no. 18954/91, § 49

արձանագրել է, որ **ընդհանուր առմամբ բարձրաստիճան պաշտոնյաների և նախկին պաշտոնյաների խոսքն ավելի մեծ ազդեցություն ունի, ինչից ելնելով՝ ավելի խնդրահարույց կարող է դիտարկվել կամ ավելի ծանր հետևանքների հանգեցնել:**

Ֆերետն ընդդեմ Բելգիայի գործի շրջանակներում, որն առնչվել է պատգամավորի կողմից ատելության խոսքի տարածմանը, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քաղաքական գործիչները պետք է հատկապես ուշադիր լինեն ժողովրդավարության և դրա սկզբունքների պաշտպանության նկատմամբ և արձանագրել, որ այն, որ դիմողը պատգամավոր է, որևէ կերպ չի կարող նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հանդիսանալ:[8]

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով Վարքագծի կանոնագրքի 14-րդ կետի դրույթները՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված կետով արգելված է ոչ թե հակաօրինական վարքագծի խրախուսումը կամ դրա նկատմամբ հանդուրժողականությունը, այլ այնպիսի վարքագիծը, որը **կարող է ընկալվել** որպես հակաօրինական վարքագծի խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն:

Հանձնաժողովն ընդգծում է, որ նշված կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խոսքը, պայմանավորված նրանց կարգավիճակով և պաշտոնեական դիրքով, կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ հասարակական ընկալումների ձևավորման վրա: Ըստ այդմ, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց վարքագծով պետք է օրինակ ծառայեն հասարակության այլ անդամների համար՝ նպաստելով հակաօրինական վարքագծի նկատմամբ հանրային անհանդուրժողականության ձևավորմանը:

Հարկ է ընդգծել, որ վարքագծի՝ որպես հակաօրինական վարքագծի խրախուսում կամ դրա հանդուրժողականություն ընկալվելը պետք է գնահատվի օբյեկտիվ ընկալման տեսանկյունից, մասնավորապես, առաջնային կերպով պետք է դիտարկվի ոչ թե հանրային պաշտոն զբաղեցնող անձի դիտավորությունը, այլ այն

[8] Տես Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Feret v. Belgium) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 15615/07, § 75

հանգամանքը, թե հանրության կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը ողջամտորեն ինչպես կարող է ընկալվել:

Քննարկվող դեպքում Տ.Սափեյանն ինչպես թիվ 14/2024/Վ/Վ վարույթի իրականացման ընթացքում ներկայացված ցուցմունքով, այնպես էլ Պարզաբանմամբ չի վիճարկել և անգամ հաստատել է, որ կատարել է Հրապարակմամբ ներկայացված արտահայտությունը: Ավելին, Տ.Սափեյանի հետ հարցազրույցն անցկացրած լրագրողի գրությամբ ևս հավաստվել է, որ Հրապարակմամբ Տավրոս Սափեյանի հնչեցրած խոսքերը վերաշարադրվել են նույնությամբ՝ առանց որևէ փոփոխության:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ պատասխանելով իր տեղակալի կողմից քաղաքացու նկատմամբ ենթադրյալ բռնության գործադրման վերաբերյալ հարցին՝ Տ.Սափեյանը պատասխանել է, որ իր տեղակալն «ընդամենը մեկ ճլոտի է տվել քաղաքացուն իր դրսևորած վարքի համար»:

Պարզաբանմամբ Տ.Սափեյանը նշել է, որ նշված արտահայտության կատարմամբ ոչ թե փորձել է արդարացնել իր տեղակալի վարքագիծը կամ խրախուսել այն, այլ պարզապես առօրյա-խոսակցական կերպով է պատասխանել՝ հայտնելով իրեն այդ պահին հայտնի տեղեկությունն առ այն, որ իր տեղակալի կողմից քաղաքացուն ապտակելու պատճառը քաղաքացու կողմից անթույլատրելի լկտի վարքագծի ցուցաբերումն է:

Հանձնաժողովն արձանագրում է, որ «ընդամենը մեկ ճլոտի է տվել քաղաքացուն իր դրսևորած վարքի համար» արտահայտությունում կիրառված «ընդամենը» բառը նշանակում է՝ 1. բոլորը միասին, 2. եղած-չեղածը, արած-չարածը (Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Աղայան, Երեւան, 1976, հ. 1 էջ 399): Ըստ այդմ, նշված բառի կիրառումն արտահայտությանը հաղորդում է ենթադրյալ բռնության կիրառումը հիմնավորող, արդարացնող կամ առնվազն դրա վտանգավորությունը թերագնահատող բնույթ: Ընդ որում, արտահայտության նման ընկալումն էլ ավելի է ընդգծվում այն հանգամանքով, որ Տ.Սափեյանը հարցազրույցի շրջանակներում շեշտել է քաղաքացու «լկտի վարքագիծը»՝ որպես բռնություն կիրառելու պատճառ, և չի ընդգծել բռնության կիրառման անթույլատրելիությունը կամ քննադատելի բնույթը, ինչից տպավորություն է ստեղծվում, որ Տ.Սափեյանի պատկերացմամբ անձի «լկտի

վարքագիծը» կարող է արդարացնել կամ պակաս քննադատելի դարձնել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բռնության գործադրումը:

Հանձնաժողովը գտնում է, որ Վարքագծի կանոնագրքի 14-րդ կետով նախատեսված՝ որպես հակաօրինական վարքագծի նկատմամբ հանդուրժողականության դրսևորում ընկալվող վարքագիծ դրսևորելու արգելքը պարտավորեցնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց իրենց խոսքում դրսևորելու զգուշավորություն, հավաստիանալու, որ անկախ իրենց դիտավորությունից՝ խոսքը ողջամտորեն չի կարող ընկալվել որպես հակաօրինական վարքագծի խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն:

Հանձնաժողովը գտնում է, որ նման զգուշավորությունը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ խոսքը գնում է ժողովրդավարական հասարակությունում հիմնաքարային նշանակություն ունեցող խնդիրների մասին: 2024 թվականի հոկտեմբերի 18-ի՝ թիվ 14/2024/Վ/Վ որոշմամբ Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«(...) հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլոց նկատմամբ ֆիզիկական ուժի կամ բռնության գործադրումն անհամատեղելի է ժողովրդավարական հասարակության հիմնասյուն հանդիսացող՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետ, ուստիև աներկբայորեն հանրային հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ կարող է նշանակալի ազդեցություն ունենալ ոչ միայն բռնությունից տուժած անձի, այլև ամբողջ հասարակության համար: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բռնության գործադրումը, բացի կոնկրետ անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի խախտումից, նաև լուրջ ռիսկեր է պարունակում հանրային հեղինակությանը վնասելու տեսանկյունից:»:

Ըստ այդմ, նկատի ունենալով, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից այլոց նկատմամբ բռնության գործադրումն անհամատեղելի է ժողովրդավարական հասարակության հիմնասյուն հանդիսացող՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետ և մեծ ռիսկեր է պարունակում հանրային իշխանության հեղինակությանը վնասման տեսանկյունից, ինչպես նաև հաշվի առնելով, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խոսքն առանձնահատուկ ազդեցություն կարող է ունենալ

հանրային ընկալման վրա՝ Հաձնաժողովն արձանագրում է, որ նման դեպքերի մասին խոսելիս հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց խոսքում առանձնահատուկ զգուշավորություն պետք է դրսևորեն՝ երաշխավորելու համար, որ իրենց խոսքը ողջամտորեն չընկալվի որպես նման բռնության խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն:

Հանձնաժողովը գտնում է, որ անգամ այն պարագայում, եթե Տ.Սափեյանը չի ունեցել իր տեղակալի կողմից ենթադրյալ բռնություն կիրառելն արդարացնելու կամ այլ կերպ հանդուրժողական վարքագիծ դրսևորելու նպատակ, Տ.Սափեյանը չի դրսևորել բավարար զգուշավորություն և չի կառուցել իր խոսքն այնպես, որպեսզի խուսափի այն հնարավորությունից, որ իր խոսքը ողջամտորեն կարող է ընկալվել որպես բռնության նկատմամբ հանդուրժողականության դրսևորում: Հանձնաժողովը գտնում է, որ Տ.Սափեյանը կարող էր և պարտավոր էր գիտակցել, որ իր գործածած ձևակերպման արդյունքում իր խոսքը կարող է ողջամտորեն ընկալվել որպես բռնության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի դրսևորում:

Ըստ այդմ, Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ տվյալ պարագայում Տ.Սափեյանի դիտավորության առկայությանը կամ բացակայությանը՝ համարելով այդ հանգամանքը ոչ վերաբերելի Վարքագծի կանոնագրքի 14-րդ կետի խախտման առկայությունը գնահատելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Տավրոս Սափեյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ